ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 47. ԱՄԵՐԻԿԱ ՄԱՅՐՑԱՄԱՔԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1

Երկրագործությամբ զբաղվելու համար անհրաժեշտ էր օրացույց: Մայաների ստեղծած օրացույցը հին ժողովուրդների ամենաճշգրիտ օրացույցներից մեկն է: Մայաների քաղաքներում կային աստղադիտարաններ: Քրմերը կարողանում էին հաշվարկել Արեգակի շուրջը մոլորակների պտույտի ժամանակը և կանխագուշակում էին արևի ու լուսնի խավարումները: Օրացույցի հետ էր կապված և մաթեմատիկայի զարգացումը: Մայաները աշխարհում առաջինը սկսեցին օգտագործել զրո թվանշանը:

2

Մայաները կառուցում էին աստիճանավոր բուրգերի ձևով պալատներ և տաճարներ: Այդ շինությունները զարդարում էին աստվածների արձաններով և բարձրաքանդակներով:

3

Մեծ լճի կենտրոնում գտնվող կղզիների վրա նրանք հիմնեցին ***Տենոչտիտլան*** մայրաքաղաքը: Կղզիներն իրար հետ կապեցին կամուրջներով, քաղաքը հատեցին ուղիղ փողոցներով ու ջրանցքներով, որոնց երկայնքով բարձրանում էին տաճարներն ու պալատները:

Ացտեկները մեծ հաջողությունների հասան արհեստներում: Ոսկերիչները ոսկուց և արծաթից զարդեր էին պատրաստում, գունավոր քարերով խճանկարներ էին ստեղծում: Արհեստավորները պատրաստում էին տարբեր ձևերի նախշազարդ անոթներ:

4

Ացտեկների պետության գլուխ կանգնած էր ժառանգական տիրակալը: Պետական պաշտոնների նշանակվում էին ավագանու անդամները: Նրանք կայսրից ծառայության դիմաց ստանում էին կալվածքներ և ենթակա գյուղերից գանձում էին իրենց անհրաժեշտ կենսամթերքը և ապրանքները: Ացտեկների պետությունը իր հզորությանը հասավ Մոնթեսումա կայսեր (1502–1520) օրոք:

Ացտեկների Մոնթեսումա կայսրը

5

Պետության գլուխ կանգնած էր Գերագույն Ինկան՝ անսահմանափակ իշխանությամբ: Ինկերի ցեղը հանդիսանում էր պետության ավագանին: Պետության բարձրագույն վարչական և կրոնական պաշտոնները վարում էին ինկերը: Նրանք իրենց անվանում էին «Արևի որդիներ»: Արևը ինկերի գերագույն աստվածն էր, Արևի տաճարներ կառուցված էին բոլոր մարզերում:

Ինկերը կառուցել էին ***2 մայրուղի***, որոնք իրար զուգահեռ ձգվում էին ներկայիս Էկվադորից մինչև Չիլի:

Դրանք իրար էին կապվում միջանկյալ ճանապարհներով: ***Ճանապարհները սալարկված էին,*** երկու կողմից ամրացված էին եզրաքարերով, գետերի և անդունդների վրա գցված էին ***կախովի կամուրջներ***: Ճանապարհներին, իրարից որոշակի հեռավորության վրա, կառուցված էին ***փոստային կայաններ***: Արագավազ սուրհանդակները էստաֆետային ձևով բանավոր լուրերը իրար փոխանցելով՝ արագ հասցնում էին մայրաքաղաք և հետ փոխանցում Գերագույն Ինկայի հրամանները:

6

Ացտեկների պետությունը նվաճեց և գաղութացրեց իսպանացի կոնկիստադոր Էռնան Կորտեսը 1519 թվականին: Կորտեսը իր 600 զինվորներով ափ իջավ Մեքսիկայում: Ացտեկները, իսպանացիներին համարելով իրենց աստծո պատվիրակները, թույլ տվեցին անարգել հասնել Տենոչտիտլան: Կայսր Մոնթեսուման նրանց ընդունեց մեծ շուքով: Գաղտագողի թալանելով Մոնթեսումայի գանձերը, կայսրին էլ պատանդ վերցնելով, իսպանացիները փորձեցին գիշերով հեռանալ քաղաքից: Ացտեկները նրանց հետապնդեցին, և գանձերը կորցնելով՝ իսպանացիները մազապուրծ փախան: Երկու տարի անց Կորտեսը ավելի մեծ բանակով գրավեց Տենոչտիտլանը և վերջ դրեց Ացտեկների կայսրությանը: Թալանված ոսկու մի մասը ուղարկելով Իսպանիայի արքային՝ Կորտեսը փոխարքայի տիտղոս ստացավ և կառավարեց Մեքսիկան մինչև իր մահը:

1521 թվականին Իսպանիայի թագավորը Յուկատանին տիրելու իրավունք տվեց Ֆրանսիսկո դե Մոնտեոյին: Սակայն մայաների քաղաքները ցրված էին Յուկատանի ջունգլիներում, և ամեն քաղաք ուժեղ դիմադրություն էր ցույց տալիս՝ մեծ կորուստներ պատճառելով իսպանացիներին: Տևական պայքարից հետո միայն Ֆրանսիսկո դե Մոնտեոյի որդին 1562 թվականին կարողացավ գրավել Յուկատանի տարածքը, թեև մայաների վերջին հեռավոր ամրությունը նվաճվեց ավելի ուշ՝ 1597 թվականին:

Ինկերի պետությունը նվաճեց կոնկիստադոր Ֆրանսիսկո Պիսարոն 1532 թ.: Նա մեծ գումարի դիմաց թագավորից փոխարքայի պաշտոն ստացավ: Սակայն միայն 1572 թ. իսպանացիները կարողացան վերջ դնել ինկերի դիմադրությանը:

Իսպանացիների հաջողությունները պայմանավորված էին նրանով, որ նրանք զինված էին պողպատե սրերով, հրազենով և թնդանոթներով: Բացի դրանից, իսպանացիները ձիեր ունեին, որոնք Ամերիկայում հայտնի չէին և սարսափ էին ազդում բնիկների վրա:

Տեղաբնիկները կռվում էին պարզունակ զենքերով՝ դագանակներով, նիզակներով, նետ ու աղեղով, որոնք չէին կարողանում վնասել իսպանացիների զրահները:

Պիսարոն 300 զինվորով ափ իջավ Պերուում: Ինկերի կայսրությունում գահակալական պայքար էր ընթանում: Կայսր Ատահուալպային հրավիրելով հանդիպման, Պիսարոն դիմեց խորամանկության: Նրա մարդիկ կրակ բացեցին ինկերի վրա և կայսրին պատանդ վերցրին: Կայսրին ազատելու դիմաց Պիսարոն մեծ քանակով ոսկի և արծաթ պահանջեց, բայց փրկագինը ստանալով՝ խոստումը դրժեց՝ սպանելով Ատահուալպային: Համալրում ստանալով՝ Պիսարոն գրավեց ինկերի մայրաքաղաք Կուսկոն:

Ինկերի Ատահուալպա կայսրը

Մաչու Պիկչու՝ ինկերի վերջին անկախ քաղաքը